

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՍԱՀՈՒՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

ՂԱԶԻՆՅԱՆ Բ. Վ.

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

Նորմաստեղծ լիազորությունների առկայությունը կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակում պայմանավորված է օրենսդրական նորմերի լիարժեք կենսագործման անհրաժեշտությամբ, քանի որ վերջիններս, որպես կանոն, կրում են ընդհանուր բնույթ և արդյունավետ կենսագործման համար պահանջում են ենթաօրենսդրական իրավակարգավորման մակարդակով իրականացվող հետագա որոշակիացում¹: Կառավարության որոշումները, ունենալով անմիջական կարգավորիչ դեր ոչ միայն սլետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այլև սլետական կառավարման մյուս մարմինների ակտերի ձևավորման, բովանդակության կատարելագործման և դարգացման գործում, կաղմում են Հանրապետության պետական կառավարման բոլոր մարմինների հրապարակած իրավական ակտերի բուղղի դաղաթը:

Օրենսդիրը, ելակետ ընդունելով կառավարության որոշումների ենթաօրենսդրական բնույթը ՀՀ իրավական ակտերի միասնական համակարգում, ամրագրել է, որ դրանղով կարգավորման է ենթակա օրենքով չկարղավորված յուրաքանչյուր հարաբերություն, եթե այդ հարաբերությունը ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքով կամ ՀՀ Նախագահի հրամանագրով ու կարղաղրությունմբ չպետք է կարղավորվի իրավական այլ ակտերով: Հաչվի առնելով վերոհիշյալ իրավաղրությունի առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ կառավարության նորմաստեղծ գործունեության սահմանաղրաիրավական կարղավորումն իրականացվում է որոշակի իրավական սկղբունքների կենսագործմամբ, որոնք, ըտտ էություն, հանղում են հետևյալին.

1) Այղ իրավական ակտերը կայացված կառավարչական որոշումների իրավաբանական արտահայտությունն են, որոնղ ընդունմամբ են կենսագործվում այղ մարմինն վերապահված լիաղորությունները:

2) Յուրաքանչյուր պետական մարմին իրավասու է ընդունելու միմիայն այնպիսի իրավական ակտեր, որոնք նախատեսված են

¹ Տե՛ս Комментарий к Конституции Российской Федерации (под ред. В. Д. Зорькина, Л. В. Лазарева, М., 2009, с. 879).

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանաղրական իրավունք, 4-րղ լրամղ. հրատ. (պատ. խմբ.՝ Այվաղյան Ն. Ա., և., 2008, էղ 623-624):

³ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րղ հոդվածի 3-րղ մասը:

իրենց՝ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված իրավասութ-
յամբ: Ընդունված որոշման համապատասխանությունն ընդունող
մարմնի իրավասության բնույթին և ծավալին վերջինիս իրավաչա-
փություն, հիմնավորվածության և բովանդակային լիարժեքության
ապահովման կարևորագույն նախապայմաններից մեկն է⁴: Օրինակ՝
ՌԴ սահմանադրական դատարանն իր՝ 01.04.1997 թ. թիվ 6-Պ որոշ-
մամբ շեշտադրել է կառավարության կողմից իշխանությունների
տարանջատման սկզբունքի խախտման անթույլատրելիությունը և
այդ համատեքստում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորո-
շումը. «... կառավարությունն իր որոշմամբ, ներդնելով պարտադիր
վճար էլեկտրաէներգիայի համար, որը, փաստորեն, հանդես է եկել
որպես հարկի նոր տեսակ, սահմանադրանքի է իր լիազորություննե-
րը՝ ներիութելով օրենսդիր մարմնի իրավասության ոլորտ և խախ-
տել է ՌԴ Սահմանադրությամբ նախատեսված դաշնային հարկերի
և տուրքերի սահմանման կարգը, այն է՝ դաշնային օրենսդիր մարմ-
նի կողմից, դաշնային օրենքով և սահմանադրորեն նախատեսված
օրենսդրական դործընթացի շրջանակներում»:

3) Այդ ակտերը միակողմանի և իմպերատիվ իրավարանական-իշ-
խանական կամարտահայտության արդյունք են, որի շնորհիվ
պետական շահը և պետական կամքը ստանում են խիստ որոշակի
բնույթ և արտահայտման պարտագիր ձև: Դրանք ենթակա են պար-
տադիր կատարման հանրապետության ամբողջ տարածքում:

4) Այդ իրավական ակտերով սահմանվում են սուբյեկտների վար-
քադեմի համապարադիր կանոններ պետական կառավարման բնա-
գավառում, կամ կարգավորվում են որոշակի (եզակի) կառավարչա-
կան հարաբերություններ: Դրանք հիմք են վարչաիրավական հա-
րաբերությունների առաջացման, փոփոխման կամ դադարեցման
համար՝ հանդես գալով որպես համապատասխան իրավաբանական
փաստեր:

5) Այդ ակտերն ունեն ենթաօրենսդրական բնույթ, այսինքն՝
գրանք ընդունում է իրավասու պետական մարմինը կամ պաշտո-
նատար անձը՝ Սահմանադրությանը, օրենքներին և Սահմանադրու-
թյամբ նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտերին հա-
մապատասխան և ի կատարումն դրանց պահանջների: Ընդ որում,
հարկ է նկատել, որ ՀՀ իրավական ակտերի համակարգում կառավա-
րության որոշումները ոչ միայն չպեաք է հակասեն ՀՀ Սահմանա-
դրությանը, օրենքներին, ՀՀ սահմանադրական դատարանի որո-
շումներին, ՀՀ Ազգային ժողովի որոշումներին, ՀՀ Նախագահի
հրամանագրերին և կարգադրություններին, ՀՀ Ազգային ժողովի
վավերացրած կամ ՀՀ Նախագահի հաստատած միջազգային պայ-
մանագրերին, այլև օրենքով նախատեսված իրենց լիազորություն-
ների շրջանակներում ընդունված՝ Կենտրոնական բանկի խորհրդի և
կարգավորող հանձնաժողովների որոշումներին⁵: Այս համատեքս-

⁴ Տե՛ս Тихомиров Ю. А. Современное публичное право, М., 2010, с. 244-245.

⁵ <http://www.consultant.ru/online/base/?req=doc;base=LAW;n=13979>

⁶ Տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը:

տում ուշագրավ է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18.04.2006 թ. ՍԴՈ-630 որոշմամբ արտահայտված իրավական գիրքորոշումը, երր քննության առարկա դարձնելով ՀՀ կառավարության՝ 2002 թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Աահմանադրությանը համապատասխանության հարցը, դատարանը հատկապես մատնանշել է հետեյալ իրավական խնդիրը. «... Հարցն այն է, թե ի՞նչ իրավական հիմքերով է ընդունվել այդ որոշումը: Որոշման նախարանում ասվում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ ու Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան և երևանում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է...»: Այլ հիմնավորումներ չկան: ՀՀ կառավարության որոշումը վկայակոչում է այնպիսի օրենսդրական դրույթներ, որոնք բավարար հիմք չեն կարող դառնալ սեփականության հարկադիր օտարման համար: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվում է. «Պետության կամ համայնքի կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշում ընդունելու լիազորություն ունեցող պետական մարմինը, ինչպես նաև այդ որոշման նախապատրաստման և ընդունման կարգը սահմանվում են օրենքով»:

Հարկ է նշել, որ մի շարք դեպքերում կառավարության համապատասխան ոլորտին առնչվող նորմատիվ զորոնեեոթյամբ կարող է պայմանավորվել նաև օրենսդրական նորմերի լիարժեք և արդյունավետ կենսադործումը հասարակական հարաբերություններում: Այս տեսանկյունից ուշագրավ են ներպետական իրավակիրառական պրակտիկայում արձանագրված որոշ իրավիճակներ: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.09.2010 թ. ԱԴՈ-913 որոշմամբ արձանագրել է հետեյալ փաստը. «ՀՀ կառավարությունը չկատարելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004 թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով իրեն պատվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար: Անցած ութ տարիների ընթացքում տվյալ օրենքի գործողության համար անհրաժեշտ և բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել»⁷:

6) Այդ ակտերն ունեն գրանցում պարունակվող տեղեկատվության արտահայտման հատուկ ձև, որը ենթադրում է ակտի տեքստի շարադրումը՝ որոշակի համակարգին համապատասխան, և վերջինիս

⁷ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/index.htm>:

⁸ <http://www.concourt.am/armenian/decisions/common/index.htm>:

կառուցումը օրենսդրական տեխնիկայի կանոնների հիման վրա⁹։ Բացի այդ՝ դրանք հրապարակվում են որոշակի ընթացակարգային կանոնների պահպանմամբ, որոնք կարգավորում են նախագծերի մշակման, համաձայնեցման, քննարկման, փորձաքննության, հաստատման, գրանցման և հրապարակման փուլերը¹⁰։

7) Այդ իրավական ակտերի ընդունման ժամանակ պետք է պահպանվի ձևական մոտիվացիան, ըստ որի՝ դրանք պետք է ունենան համապատասխան հիմնավորումներ, որոնցով և պետք է սահմանվեն ընդունման նպատակներն ու պատճառները, լուծման ենթակա կարևորագույն խնդիրները։ Ընդ որում՝ դրանք պետք է կարգավորեն միարևույթ հասարակական հարաբերություններ։

Նախկինում սահմանողներն ամրագրել էր կառավարության նորմատիվ զործունեության երկաստիճան սահմանադրությամբ կառուցակարգ, ըստ որի՝ կառավարության իրավական ակտերը, ստորագրվելով վարչապետի կողմից, դեռևս ձեռք չէին բերում պարտադիր իրավական ուժ և ենթակա չէին պարտադիր կատարման հանրապետության ամբողջ տարածքում, քանի դեռ չէր վավերացրել Հանրապետության Նախագահը։

Մեր խորին համոզմամբ, նման իրավակարգավորումն ինքնին Հանդեցրել էր այնպիսի մի իրավիճակի առաջացման, երբ վարչապետը, «դե յուրե»՝ ղեկավարելով գործադիր իշխանության «ընթացիկ գործունեությունը», որևէ իրավական հնարավորություն չունենալով ընդունելու ինքնուրույն որոշումներ իր ղեկավարած պետական իշխանության մարմնի իրավասությանը վերապահված որևէ հարցի վերաբերյալ՝ առանց պետության ղլխի «թույլտվության», որի հետևանքով վարչապետի գործառնական դերը՝ որպես կառավարության ղեկավարի, ըստ էության, ստացել էր ձևական բնույթ։

Վիճակը բոլորովին այլ է ներկայիս սահմանադրությամբ կարգավորմամբ։ Կառավարության նորմատիվ զործունեությունը, որոշակի բացառություններով հանդերձ, ձեռնարկվել է պետության ղլխի վավերացման պահանջից, իսկ որոշումների ստորագրման իրավասությունը վերապահվել է վարչապետին։

Կարծում ենք, որ նման մոտեցմամբ սահմանադիրը որոշակի առումով լուծում տվեց նախկինում առկա վերոհիշյալ խնդրահարույց իրավիճակին, ինչը, ըստ էության, հնարավորություն կընձեռի գործադիր իշխանության բարձրագույն մարմնին սեփական նորմատիվ զործունեությամբ արդյունավետ իրականացնելու Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունները։ Սակայն խնդիրներից զերծ չէ նաև նոր սահմանադրությամբ կարգավորման կառուցակարգը։

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 88.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության Նախագահը վավերացնում է մարզպետների նշանակման և ազատման մասին կառավարության որո-

⁹ См. у Тихомиров Ю. А., и др. в кн.:

¹⁰ См. у Административное право: учебник (А. Н. Бахрах, Б. В. Россинский, Ю. Н. Стариков, М., 2008, с. 377-380).

շումները: Այսինքն, ի տարբերություն նախկինի՝ ներկայումս պահպանվել է կառավարության պետության ղլխի կողմից վավերացման ենթակա որոշումների միայն մեկ խումբ, որը վերաբերում է բացառապես Հանրապետության մարզպետների նշանակման և ազատման գործընթացին:

Մեր կարծիքով, Հիշյալ սահմանադրական կարգավորումը չի բխում ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ Հանրապետության Նախագահի և կառավարության միջև իրավասությունների գործառնական տարանջատման կառուցակարգից, ըստ որի՝ ՀՀ ներքին քաղաքականության մշակման և իրականացման իրավասությունը սահմանադրորեն վերապահված է բացառապես կառավարությանը հետևյալ հիմնավորմամբ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 4.1-ին կետի համաձայն՝ կառավարությունն իրականացնում է տարածքային զարգացման պետական քաղաքականությունը: Իսկ ՀՀ Սահմանադրության 88.1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիշյալ սահմանադրական նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ կառավարությունը, որպես Հանրապետության ներքին քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական իշխանության մարմին, որպես վերջինիս բաղկացուցիչ տարր, բացառապես իր որոշմամբ նշանակվող և ազատվող մարզպետների միջոցով է իրականացնում իր տարածքային զարգացման պետական քաղաքականությունը: Սակայն, չգիտես թե ինչու, խնդրո առարկա սահմանադրաիրավական նորմի ուժով պետության ղլխը հնարավորություն է ստացել ներխուժելու կառավարության իրավասության ոլորտ և, վավերացնելով կառավարության խնդրո առարկա որոշումները, ըստ էության, մասնակցելու Հանրապետության ներքին քաղաքականության մշակման և իրականացմանը՝ ներագդելով իրավասու պաշտոնատար անձանց նշանակման և ազատման գործընթացի վրա այն սլարադայում, երբ վերջինիս պատասխանատուն ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետք է լինի բացառապես ՀՀ կառավարությունը:

Այլ է խնդիրը Հանրապետության արտաքին քաղաքականությունը մշակման և իրականացման պարագայում: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը «...ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր դեկավարումը...»: Իսկ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի հետ:

Հիշյալ սահմանադրաիրավական նորմերի վերլուծությունը վկայում է, որ չնայած այն հանգամանքին, որ սահմանադիրը խնդրո

առարկա ընադավառում նախատեսել է երկու սահմանադրական ինստիտուտների համատեղ գործառնական մասնակցությունը, այնուամենայնիվ, ի տարբերություն կառավարության, պետության գլխին է վերապահվել արտաքին քաղաքականության «ընդհանուր ղեկավարման» լիազորությունը: Սակայն սույն գործառնական կարգավիճակի վերլուծությունը ակնհայտ է դարձնում այնպիսի մի իրավիճակ, երբ Հանրապետության նախագահն իրավասու է միայն հրավիրելու և վարելու կառավարության նիստեր այս բնագավառին առնչվող հարցերով, որոնց ժամանակ քննության առնված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է կառավարությունը, որոնք, իրենց հերթին, ստորագրում է վարչապետը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պետության գլուխն արտաքին քաղաքականության մշակման և իրականացման բնագավառում օժտվել է ղուտ կադմակերպարարական բնույթի լիազորություններով, իսկ որեէ սահմանադրարարական լծակ, որը հնարավորություն կտա ներազդելու կառավարության խնդրո առարկա բնագավառին առնչվող նորմատեղծ գործունեության նկատմամբ՝ դրա իրականացման դրժընթացում, վերջինս չունի: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ դանում ենք, որ անհրաժեշտ է սահմանադրորեն լիազորել Հանրապետության նախագահին վավերացնելու բացառապես ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող կառավարության որոշումները:

Ի թիվս վերոնշյալ խնդիրների կցանկանայինք անդրադառնալ մեկ այլ հարցի ևս, որը, կարծում ենք, անխզելիորեն կապված է քննության առարկա ինստիտուտի հետ:

Մարդկանց կյանքի բարելավմանն ուղղված յուրաքանչյուր բարեփոխման անքակտելի տարրն է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Ընդ որում՝ ամբողջապես պետական կառավարման և միաժամանակ նրա արդյունավետության դնաչատմանը ներկայացվող ելակետային պայմաններից է սահմանադրական սկզբունքներին և նորմերին վերջինիս անվերապահ համապատասխանությունը: Պետակտն իշխանության մարմինների գործունեության, ինչպես նաև նրա իրավաստեղծ և իրավակիրառական բնագավառների սահմանադրականության ապահովումը պետության առաջընթաց զարգացման հիմնասյուրներից մեկն է: Այս տեսանկյունից Սահմանադրական դատարանի որոշումները հանդես են գալիս որպես կառավարության իրականացրած պետական քաղաքականության սահմանադրարարական դնաչատական և առաջնահերթ նշանակություն ունեն դրա զարգացման և կատարելագործման տեսանկյունից¹¹: Բացի այդ՝

¹¹ Sl'm Реализация решений Конституционного суда Российской Федерации как индикатор и инструмент повышения качества государственного управления (Журнал Конституционного правосудия, 2010, N 3(15), с. 10).

դրանք մեծապես սլալմանավորում են նաև պեաական իշխանութլան մարմինների գործառնական փոխհարաբերութլունները¹²:

Գ. Գ. Հարութլունլանի գենահատմամբ՝ սահմանադրութլան դե-րակալութլան սսլահոլման կարևոր խնդիրներից է նաև անհրաժեշտ սահմանադրական վարքագծի դրսևորումը պեաական իշխանութլան բուրդի բոլոր մակարդակներում: Այս վարքագծի մակարդակը հա-սարակական հարաբերութլունների սահմանադրականացման կա-րևոր նախապլմաններից մեկն է: Դրա հասաաաումը նույնպես պահանջում է համակարգված աշխատանք: Իրականութլունն այն է, սակայն, որ սահմանադրութլան նկատմամբ դեռևս առկա են խոր-հրդալին մտածելակերպը և դրան համապատասխանող հոգեբանու-թլունը¹³: Անհրաժեշտ է, որ սահմանադրական նորմերը կլանքի կոչ-վեն, դրանց նկատմամբ դրսևորվի հասարակական կալուն վերաբեր-մունք ձևավորելով հասարակութլան սահմանադրական մշակույթի իրական որակներ՝ դրանք դարձնելով աղգալին մշակույթի օրգանա-կան բաղադրատարրը¹⁴:

ՀՀ Սահմանադրութլան 49-րդ հոդվածի ուժով պետութլան դլու-խը լիադորվել է կասեցնել կառավարութլան որոշումների գործողու-թլունը մեկ ամիս ժամկետով և դիմել Սահմանադրական դատարան՝ ՀՀ Սահմանադրութլանը դրանց համապատասխանութլան հարցը պարզելու նպատակով¹⁵: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ նշված գործե-րով Հանրապետութլան Նախագահը սահմանադրական դատարան կարող է դիմել կասեցման վերաբերլալ հրամանադիրն ուժի մեջ մտնելու օրը¹⁶: Սահմանադրաիրավական այս ինստիտուտը նորա-մուծութլուն է, թեև Հանրապետութլան Նախագահը տարբեր ձևե-րով ու մեթոդներով ալղպիսի վերահսկողութլուն մշտապես իրակա-նացրել է: Դեռևս «Հալաստանի Հանրապետութլան Նախագահի մա-սին» 1991 թ. օգոստոսի 1-ի օրենքով որպես Հանրապետութլան բարձրագույն պաշտոնատար և գործադիր իշխանութլունը գլխավո-րող անձ, դրա 8-րդ հոդվածի համաձայն Հանրապետութլան Նախա-գահն իրավասու էր վերացնելու կառավարութլան և մլուս գերա-տեսլութլունների ընդունած այն որոշումները, որոնք հակասում էին Սահմանադրութլանը, օրենքներին, Գեբադույն խորհրդի որո-շումներին և իր հրամանագրերին¹⁷:

¹² Հարութլունլան Գ. Գ., Սահմանադրական դատարանի իրավական դիրքորո-շումները՝ որպես նախադեպալին իրավունքի աղբյուր (Զեկույց Երևանլան 16-րդ միջաղգալին խորհրդաժողովում, Ե., 2011, էլ 1-2):

¹³ Арутюнян Г. Г. Современные вызовы обеспечения верховенства Консти-туции (Конституционное правосудие в новом тысячелетии, 2009, с. 42-43).

¹⁴ Հարութլունլան Գ. Գ., Սահմանադրականութլան գումարլիններ իրավուն-քի գերակալութլուն, կալուն զարգացում (Օրենք և իրականութլուն, 2011, N 3, էլ 1-2):

¹⁵ Պետութլան գլխի հիշատակված լիադորութլունն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրութլան 86-րդ հոդվածի 4-րդ մասում:

¹⁶ Տե՛ս ՀՀ ՊՏ 2006.06.21/32 (187):

¹⁷ Տե՛ս Հալաստանի Հանրապետութլան Սահմանադրութլան մեկնաբանութ-լուններ (ընդհ. խմբ.՝ Գ. Հարութլունլանի, Ս. Վաղարշլանի, Ե., 2010, էլ 856):

Վերջին երեք տարիների ընթացքում, ինչպես ցույց է տալիս ՀՀ սահմանադրական դատարանի 2008-2010 թթ. ընդունված որոշումների կատարման վիճակի հաղորդումների ուսումնասիրությունը, ՀՀ կառավարության որոշումների սահմանադրականության հարցերի վերաբերյալ ՀՀ Նախագահը որևէ դիմում չի ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան: Ընդ որում՝ հարկ է նշել, որ Հանրապետության Նախագահի կողմից 2008 թ. ներկայացված 44 դիմումները, 2009 թ. ներկայացված 54 դիմումները և 2010 թ. ներկայացված 43 դիմումները բացառապես վերաբերել են միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը¹⁸: Իսկ ՀՀ կառավարությունը Սահմանադրական դատարանի դործունեության տասնհինգամյա ժամանակահատվածում ներկայացրել է ընդամենը մեկ դիմում՝ 2011 թ. ապրիլի 27-ին՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի առնչությամբ:

Այս խնդրի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ արաահայտվել է հետևյալ դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանի դիմելիք որքան էլ ղիտարկվի որպես հայեցողական լիազորություն, այնուամենայնիվ, սահմանադրական յուրաքանչյուր ինստիտուտ պարտավոր է Սահմանադրության և իրավունքի գերակայությունը երաշխավորելու և ապահովելու հարցում առավելագույնը իրացնել իր լիազորությունները»¹⁹:

Իր հերթին՝ Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Իրավունքի գերակայության վերաբերյալ» CDL-AD (2011) 003 գեկույցի 45-րդ կետում՝ պետական մարմինների հայեցողական լիազորությունների վերաբերյալ, արտահայտվել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...օրենքը, որը պետական մարմիններին արամաղբում է հայեցողական լիազորություններ, պետք է սահմանի նաև հայեցողության գրսևորման սահմանները: Գործադիր իշխանությանն անսահմանափակ լիազորությունների տրամադրումը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին»²⁰:

Մեր կարծիքով, պետության գլխի կառավարության նորմատիվ գործունեության սահմանադրականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը կարող է կարևոր սահմանադրաիրավական երաշխիքներ ստեղծել գործադիր իշխանության մարմինների կողմից իրականացվող պետական կառավարչական գործունեության արդյունավետության բարձրացման ուղ-

¹⁸ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս <http://www.concourt.am/armenian/report/index.htm>:

¹⁹ Հաղորդում ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականին ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, Ե., 2010, էջ 4:

²⁰ Տե՛ս "Report on the Rule of law" (Adopted by the Venice Commission at its 86th plenary session), Venice, 25-26 March 2011, p. 15

դուլթյամբ: Միևնույն ժամանակ, կասկածից վեր է, որ ինչպես պետութեան դիւին, այնպես էլ սահմանադրական մյուս ինստիտուտներին, այդ թվում կառավարութեանը վերասլահված՝ Սահմանադրական դատարանի դիմելու լիազորութիւնը կարող է իր անհրաժեշտ և բավարար աղբեցութիւնն ունենալ հանրապետութիւնում սահմանադրական օրինականութեան հաստատման ուղղութեամբ միմիայն այն դեպքում, երբ դրա կենսադործման հարցում նրանք դրսևորում են հետևողականութիւն, որը կվերածի այն ձևական բնույթի լիազորութիւնից հստակ իրադործելի և արդյունավետ լիազորութեան:

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ
НОРМОТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРАВИТЕЛЬСТВА РА

КАЗИНЯН Б. В.

Резюме

Согласно предыдущему конституционно-правовому регулированию, обязательным требованием для нормотворческой деятельности правительства являлась ратификация актов правительства президентом республики. В результате конституционно-правовых реформ 2005 года сохранилась только одна группа правовых актов, которые подлежат обязательной ратификации главой государства.

Эти решения относятся к процессу назначения и увольнения губернаторов Республики Армения. На наш взгляд, такое конституционное регулирование противоречит первой части 85-ой статьи Конституции РА, согласно которой единоличным ответственным субъектом за формирование и осуществление внутренней политики Республики Армения является правительство.

Целесообразно уполномочить Президента республики ратифицировать решения правительства Республики Армения только в сфере внешней политики, поскольку действуя совместно с правительством и осуществляя общее руководство внешней политикой страны, глава государства имеет полномочия лишь организационно-правового характера.